ՈՒՍՍԱՐԻ 2022-2023 / ANNÉE UNIVERSITAIRE 2022-2023
Փորձնական քննություններ/ Examens blancs
2-րդ կիսամյակ / 2 ème semestre

## «Հասարակագիտության» փորձնական քննության թեստ

| | | |
|---|---|---|
| *Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը:*<br>*Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է 1 միավոր:*<br>*Միայն պատասխանի, պատասխանի բացակայության, ինչպես նաև մեկից ավելի պատասխաններ նշելու դեպքում՝ 0 միավոր:* | | |
| 1. | Իրավական կարգավորումն իրականացնում է. | ա/ պետությունը<br>բ/ ոստիկանությունը<br>գ/ դատախազությունը<br>դ/ դատարանը |
| 2. | Իրավական կարգավորման տիրույթում գտնվող հասարակական հարաբերությունները կազմում են. | ա/ իրավական կարգավորման մեթոդը<br>բ/ իրավական կարգավորման առարկան<br>գ/ իրավական կարգավորման ինստիտուտը<br>դ/ իրավական կարգավորման նորմերը |
| 3. | Օրենքների ոչ պաշտոնական մեկնաբանությունը կրում է. | ա/ ցուցադրական բնույթ<br>բ/ հետազոտական բնույթ<br>գ/ խորհրդատվական բնույթ<br>դ/ որոնողական բնույթ |
| 4. | Իրավական պատասխանատվության գործառույթները. | ա/ երկուսն են<br>բ/ երեքն են<br>գ/ չորսն են<br>դ/ հինգն են |
| 5. | Ստորև թվարկվածներից ո՞րը չի համարվում պետական կառավարման ձև. | ա/ խորհրդարանական հանրապետությունը<br>բ/նախագահական հանրապետությունը<br>գ/ դաշնային (ֆեդերատիվ) պետությունը<br>դ/ սոցիալիստական հանրապետությունը |
| 6. | Սահմանադրական դատարանը որոշումները և եզրակացություններն ընդունում է. | ա/ դիմում ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օր հետո<br>բ/ դիմում ստանալուց ոչ ուշ, քան մեկ ամիս հետո<br>գ/ դիմում ստանալուց ոչ ուշ, քան քսան օր հետո<br>դ/ դիմում ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օր հետո |

Փորձնական քննություն

| | | |
|---|---|---|
| 7. | Իրավական պատասխանատվության գործառույթ չէ. | ա/ զրկող-պատժող<br>բ/ վերականգնող-հատուցող<br>գ/ կանխող-դաստիարակող<br>դ/ վերականգնող-հաստատող |
| 8. | Փաստաբանական ծառայությունը. | ա/ կառավարական հատուկ կազմակերպություն է<br>բ/ ոչ կառավարական հատուկ կազմակերպություն է<br>գ/ հանրային մարմին է<br>դ/ տեղական ինքնակառավարման մարմին է |
| 9. | Դատախազությունը. | ա/ հասարակական համակարգ է<br>բ/ քաղաքական համակարգ է<br>գ/ միասնական կենտրոնացված համակարգ է<br>դ/ միասնական ապակենտրոնացված համակարգ է |
| 10. | ՀՀ ոստիկանապետին նշանակում է. | ա/ Ազգային ժողովը՝ վարչապետի առաջարկությամբ<br>բ/ ՀՀ վարչապետը<br>գ/ Սահմանադրական դատարանի նախագահը<br>դ/ ՀՀ նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ |
| 11. | Ամուսնությունն արգելվում է. | ա/ այն անձանց միջև, որոնցից թեկուզ մեկն արդեն այլ ամուսնության մեջ է գտնվում<br>բ/ այն անձանց միջև,որոնք ամուսնալուծված են<br>գ/այն անձանց միջև,որոնք դատապարտված են եղել<br>դ/ այն անձանց միջև, որոնցից մեկն ամուսնալուծվել է |
| 12. | Պայմանագիրն օրենք է. | ա/ պետության և քաղաքացու համար<br>բ/ միայն դրա կողմերի համար<br>գ/ քաղաքացու և օտարերկրացու համար<br>դ/ կազմակերպության և քաղաքացու համար |
| 13. | Օրենքներն օժտված են. | ա/ բարձրագույն հասարակական ուժով<br>բ/ բարձրագույն քաղաքական ուժով<br>գ/ բարձրագույն իրավաբանական ուժով<br>դ/ բարձրագույն բարոյական ուժով |
| 14. | Պայմանագրային իրավահարաբերությունները կարող են զարգանալ հետևյալ ուղղություններով. | ա/ կատարում, դադարում, փոփոխում<br>բ/ կատարում, դադարում, լուծում<br>գ/ կատարում, լուծում, նորացում<br>դ/ փոփոխում, վերանայում, վերադասավորում |
| 15. | Աշխատանքային պայմանգիրը. | ա/ բարեկամություն է<br>բ/ դաշնություն է<br>գ/ միասնություն է<br>դ/ համաձայնություն է |

| | | |
|---|---|---|
| 16. | Գործարքները. | ա/ կամային գիտակցված գործողություններ են<br>բ/ բարոյական գործողություններ են<br>գ/ ինքնանպատակ գործողություններ են<br>դ/ մարդկային գործողություններ են |
| 17. | Եթե անձի վարքից ակնհայտ է գործարք կնքելու կամքը, ապա գործարքը կոչվում է. | ա/ պատրոնաժ<br>բ/ օֆերտա<br>գ/ ակցեպտ<br>դ/ կոնկլուդենտ |
| 18. | Նոտարական ձևը չպահպանելը. | ա/ հանգեցնում է գործարքի կայացմանը<br>բ/ հանգեցնում է գործարքի առոչնչության<br>գ/ հանգեցնում է գործարքի կնքման<br>դ/ հանգեցնում է գործարքի չեղարկման |
| 19. | Անվավեր գործարքները լինում են. | ա/ վիճահարույց և առոչինչ<br>բ/ վիճահարույց և վավերական<br>գ/ վավերական և առոչինչ<br>դ/ իրավական և ոչ իրավական |
| 20. | Սուբյեկտային կազմում արատներով գործարքները. | ա/ երկուսն են<br>բ/ չորսն են<br>գ/ երեքն են<br>դ/ մեկն է |
| 21. | Անվավեր գործարքի հատուկ տեսակներ են. | ա/ առոչինչ և վիճահարույց գործարքները<br>բ/ կամային և ոչ կամային գործարքները<br>գ/ վավեր և անվավեր գործարքները<br>դ/ կեղծ և շինծու տեսակները |
| 22. | Պարտավորության կողմերն են. | ա/ պարտատերը և հայցվորը<br>բ/ պարտապանը և պարտավորը<br>գ/ պարտատերը և պարտապանը<br>դ/ հայցվորը և իրավազորը |
| 23. | Ո՞ր մարմինն է կատարում ամուսնության պետական գրանցում ՀՀ-ում: | ա/ նոտարիատը<br>բ/ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինը<br>գ/ դատարանը<br>դ/ իրավաբանական անձանց պետական գրանվման գործակալությունը |
| 24. | Ժառանգատու կարող է լինել. | ա/ իրավաբանական անձը<br>բ/ ֆիզիկական անձը<br>գ/ հասարակական կազմակերպությունը<br>դ/ քաղաքական կազմակերպությունը |

Փորձնական բնագիր

| | | |
|---|---|---|
| 25. | Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագիրը սկսել է գործել. | ա/ 1950 թվականից<br>բ/ 1987 թվականից<br>գ/ 1996 թվականից<br>դ/ 1959 թվականից |
| 26. | Մարդու իրավունքների եվրոպական դատարանն առաջին հերթին լուծում է. | ա/ դիմումների ընդունման հարցը<br>բ/ նիստերի անցկացման հարցը<br>գ/ դատավորների հարցը<br>դ/ պաշտոնական ձևաթղթի հարցը |
| 27. | Միասեռ հասարակական հարաբերությունների որոշակի կողմ կարգավորում է. | ա/ իրավունքի մեթոդը<br>բ/ իրավունքի ինստիտուտը<br>գ/ իրավունքի նորմը<br>դ/ իրավունքի ճյուղը |
| 28. | Գիտական հայտնագործություն կատարելը. | ա/ անհրաժեշտ իրավաչափ վարքագիծ է<br>բ/ թույլատրելի իրավաչափ վարքագիծ է<br>գ/ ցանկալի իրավաչափ վարքագիծ է<br>դ/ պարտադիր իրավաչափ վարքագիծ է |
| 29. | Վճռաբեկ դատարանի նպատակն է. | ա/ օրենքի կատարելագործումը<br>բ/ օրենքի միատեսակ կիրառությունը<br>գ/ օրենքի պաշտպանությունը<br>դ/ օրենքի կարգավորվածությունը |
| 30. | ՀՀ փաստաբանների պալատն ունի. | ա/ հանրային պաշտպանի գրասենյակ<br>բ/ կանանց պաշտպանի գրասենյակ<br>գ/ հասարակական պաշտպանի գրասենյակ<br>դ/ քաղաքական պաշտպանի գրասենյակ |
| 31. | Իրավախախտումը. | ա/ վարքագիծ չէ<br>բ/ վարքագիծ է<br>գ/ արարք է<br>դ/ ճիշտ են բ և գ պատասխանները |
| 32. | ՀՀ Սահմանադրությունն ընդունվում է. | ա/ նախագահի հրամանագրով.<br>բ/ հանրաքվեի միջոցով<br>գ/ ազգային ժողովի կողմից<br>դ/ ճիշտ պատասխանը բացակայում է |
| 33. | Քանի՞ ընթերցմամբ է օրենքի նախագիծը քննարկվում ՀՀ Ազգային ժողովի նիստում. | ա/ առնվազն երկու.<br>բ/ առնվազն երեք.<br>գ/ առավելագույնը երկու. |

Փորձնական տարբերակ

| | | |
|---|---|---|
| | | դ/ առավելագույնը երեք. |
| 34. | Պետության կուսակցությունների գործունեությունը հետազոտող գիտությունը կոչվում է. | ա/ տնտեսագիտություն<br>բ/ փիլիսոփայություն<br>գ/ քաղաքագիտություն<br>դ/ սոցիալական հոգեբանություն |
| 35. | Քաղաքական համակարգի գործունեությունը կարգավորվում է. | ա/ իրավական նորմերով<br>բ/ քաղաքական նորմերով<br>գ/ բարոյական նորմերով<br>դ/բոլոր պատասխանները ճիշտ են |
| 36. | Հասարակության քաղաքական համակարգը ներառում է. | ա/ պետությունը<br>բ/ քաղաքացիներին<br>գ/ կուսակցությունները<br>դ/ բոլոր պատասխանները ճիշտ են |
| 37. | Քաղաքացիական հասարակությունը. | ա/ ազատ անհատների միավորում է<br>բ/ ազատական միավորում է<br>գ/ պահպանողական անհատների միավորում է<br>դ/ ազատական անհատների միավորում է |
| 38. | Կուսակցությունների մասին առաջին անգամ հիշատակվել է. | ա/ ԱՄՆ-ի սահմանադրության մեջ<br>բ/ Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում<br>գ/ Մարդու և քաղաքացու հիմնական ազատությունները փաստաթղթում<br>դ/ ճիշտ պատասխանը բացակայում է |
| 39. | Ազատականության ակունքների մոտ կանգնած չէ. | ա/ Կ. Մարքսը<br>բ / Ի.Կանտը<br>գ/ Ջ.Լոքը<br>դ/ Թ.Ջեֆերսոնը |
| 40. | «Ժողովրդական կապիտալիզմի պետություն» հասկացությունը մշակել է. | ա/ Ջ. Հելբրեյտը<br>բ/ Մարկո Պոլոն<br>գ/ Ջ. Լոքը<br>դ/ Ռ.Ռեյգանը |
| 41. | Ինքնիշխանություն բառացի նշանակում է. | ա/ գերագույն իշխանություն<br>բ/ սոցիալական իշխանություն<br>գ/ տնտեսական իշխանություն<br>դ/ ճիշտ պատասխանը բացակայում է |
| 42. | Բոլոր տեսակի իշխանությունների բնութագրական գիծը. | ա/ կարգ ու կանոնն է<br>բ/ քաղաքացիների սեփականությունն է<br>գ/ հեղինակությունն է<br>դ/ իշխանության պատասխանատվության մակարդակի բարձրացումն է |

| | | |
|---|---|---|
| 43. | Ու՞մ կողմից կարող են առաջադրվել օրենքների նախագծեր ՀՀ–ում. | ա/ քաղաքացիների<br>բ/ ընտրողների<br>գ/ կառավարության և Ազգային ժողովի պատգամավորների<br>դ/ քաղաքացիների, ընտրողների, նախագահի, դատավորների |
| 44. | Պետության կողմից քաղաքացիների վարքագծի ընտրության ազատության օրինական սահմանափակումն ուժային ճնշման ճանապարհով կոչվում է. | ա/ հարկադրանք<br>բ/ իրավական հարկադրանք<br>գ/ քաղաքական ճնշում<br>դ/ քաղաքական հալածանք |
| 45. | Նշվածներից ո՞րն է հանդիսանում պետական կառավարման ձև: | ա/ միապետությունը<br>բ/ ժողովրդավարությունը<br>գ/ ժողովրդաիշխանությունը<br>դ/ արիեստավարժությունը |
| 46. | Իրավունքի ճյուղ չէ. | ա/ ընտանեկան իրավունքը<br>բ/ աշխատանքային իրավունքը<br>գ/ քաղաքացիական իրավունքը<br>դ/ ժառանգական իրավունքը |
| 47. | Հետևյալներից ո՞րն իրավունքի պատմական ձև չէ: | ա/ իրավական սվորույթ<br>բ/ դատական նախադեպ<br>գ/ օրենք<br>դ/ դատական սխալ |
| 48. | Նշված կառավարման ձևերից ո՞րը գոյություն չունի ներկայիս Եվրոպայում: | ա/ դուալիստական միապետությունը<br>բ/ սահմանադրական միապետությունը<br>գ/ սահմանափակ միապետությունը<br>դ/ խորհրդարանական միապետությունը |
| 49. | Իրավունքի համակարգի հիմնական տարր չէ. | ա/ իրավունքի մեթոդը<br>բ/ իրավունքի ճյուղը<br>գ/ իրավունքի ինստիտուտը<br>դ/ իրավունքի նորմը |
| 50. | Ո՞վ է պոսիբիլիզմի հայեցակարգի հեղինակը. | ա/Վիդալ Բլաշը<br>բ/Յուխան Չելենը<br>գ/Ալֆրեդ Մեխենը<br>դ/Հելֆորդ Մաքենդերին |
| 51. | Քաղաքական գիտակցությունը. | ա/ քաղաքական համակարգի սուբյեկտ է<br>բ/ քաղաքական համակարգի բաղադրատարր է<br>գ/ քաղաքական համակարգի օբյեկտ է<br>դ/ քաղաքական համակարգի հետ կապ չունի |

Փորձնական բնույթով

| | | |
|---|---|---|
| 52. | Եվրոպական միության հիմնադիր պետությունների թիվը. | ա/ չորսն է<br>բ/ վեցն է<br>գ/ ութն է<br>դ/ երեքն է |
| 53. | Մարդու իրավունքների երրորդ սերունդը առաջ մղեց. | ա/ բարեկամության գաղափարը<br>բ/ եղբայրության գաղափարը<br>գ/ ազատության գաղափարը<br>դ/ անկախության գաղափարը |
| 54. | Աստիճանակարգության հետևյալ տարբերակներից ո՞րն է բնորոշ ՀՀ դատական իշխանությանը: | ա/ առաջին ատյանի-վերաքննիչ-վճռաբեկ դատարաններ<br>բ/ վերաքննիչ-վճռաբեկ-առաջին ատյանի դատարաններ<br>գ/ վճռաբեկ-վերաքննիչ-առաջին ատյանի դատարաններ<br>դ/ սահմանադրական-արտակարգ-իրավական դատարաններ |
| 55. | Նախարարի հրամանը. | ա/ ընդհանուր ենթաօրենսդրական ակտ է<br>բ/ գերատեսչական ենթաօրենսդրական ակտ է<br>գ/ տեղական ենթաօրենսդրական ակտ է<br>դ/ լոկալ ենթաօրենսդրական ակտ է |
| 56. | Ո՞վ է քաղաքացիական իրավունքի «եռյակ բանաձև»–ի հեղինակը: | ա/ Թովմաս Ջեֆերսոնը<br>բ/ Իմանուել Կանտը<br>գ/ Ջոն Լոքը<br>դ/ Կարլ Մարքսը |
| 57. | Միջազգային իրավունքի նյութական պատասխանատվության տեսակ չէ. | ա/ ռեպարացիան<br>բ/ ռեստիտուցիան<br>գ/ սուբսիտուցիան<br>դ/ ռեստորացիան |
| 58. | Քաղաքացիական իրավունք չէ. | ա/ կյանքի իրավունքը<br>բ/ արժանապատվության իրավունքը<br>գ/ անձնական ազատության իրավունքը<br>դ/ հանրային կառավարմանը մասնակցելու իրավունքը |
| 59. | Ի՞նչն են հաճախ համարում մարդու «երկրորդ ես»: | ա/ երջանկությունը<br>բ/ հարստությունը<br>գ/ խիղճը<br>դ/ էգոիզմը |
| 60. | Բարոյական նորմերը հենվում են. | ա/ հեղինակության ուժի վրա<br>բ/ պետության հարկադրանքի վրա<br>գ/ ուժի հանդեպ հարգանքի վրա<br>դ/ ուժի հեղինակության վրա |
| Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը: | | |

| Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը՝ 2 միավոր: Սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում՝ 0 միավոր: | | |
|---|---|---|
| 61. | Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ | ա/ մարդու իրավունքների առաջին սերունդը եկավ լուծելու մարդու անձնական և քաղաքական ազատության խնդիրը<br>բ/ մարդու իրավունքների երկրորդ սերունդը եկավ լուծելու հավասարության և համերաշխության խնդիրը<br>գ/ մարդու իրավունքների երրորդ սերունդը առաջ մղեց եղբայրության և ազատության գաղափարը<br>դ/ մարդու իրավունքների չորրորդ սերունդը առաջ մղեց եղբայրության գաղափարը |
| 62. | Ստորև թվարկվածներից ո՞ր դեպքում Սահմանադրական դատարանը եզրակացություն չի տալիս. | ա/ Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին<br>բ/ Ազգային ժողովի նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին<br>գ/ Հանրապետության նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին<br>դ/ համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին |
| 63. | Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ. | ա/ Պետությունը գերակայությամբ օժտված հասարարական կազմակերպություն է:<br>բ/ Պետության սահմանադրական բնութագրի համաձայն պետությունը ժողովրդավարական, իրական, սոցիալական հաստատություն է:<br>գ/ Պետությունը կարող փոխել մարդու բնական իրավունքների էությունը:<br>դ/ Գերակայությունը և պետական հարկադրանքը պետության մենաշնորհային իրավունքն է: |
| 64. | Բուհում սովորող աշխատողներին ընթացիկ քննություններին նախապատրաստվելու և դրանք հանձնելու համար տրամադրվող ուսումնական արձակուրդը. | ա/ յուրաքանչյուր քննության համար 3 աշխատանքային օր է<br>բ/ յուրաքանչյուր քննության համար 2 աշխատանքային օր է<br>գ/ յուրաքանչյուր քննության համար 6 աշխատանքային օր է<br>դ/ որոշվում է ուսումնական պլանով նախատեսված օրերի քանակով |
| 65. | Գործարքը/պայմանագիրը գրավոր կերպով ձևակերպող ցանկացած փաստաթղթի պարտադիր հատկանիշ է. | ա/ գործարքը հաստատող անձի (անձանց) ստորագրությունները<br>բ/ գործարքը կնքող անձի (անձանց) ստորագրությունները<br>գ/ գործարքը հաստատող իրավաբանական անձի կնիքի առկայությունը<br>դ/ նոտարի կողմից ստորագրության վավերացումը |

| | | |
|---|---|---|
| 66. | Նշվածներից ո՞ր տարբերակում է իրավաչափ վարքագծի տեսակը համապատասխանում օրինակին ՀՀ-ում: | ա/ պարտադիր իրավաչափ վարքագիծ (ընտրել այլ դավանաք)<br>բ/ անհրաժեշտ իրավաչափ վարքագիծ (գիտական հայտնագործություն)<br>գ/ անհրաժեշտ իրավաչափ վարքագիծ (բանակում ծառայել)<br>դ/ ցանկալի իրավաչափ վարքագիծ (խմբակի անդամակցելը) |
| 67. | Նշված տարբերակներից որն է սխալ ՀՀ պարագայում. | ա/ Արտաքին քաղաքականության անմիջական կառավարումն իրականացնում է արտաքին գործերի նախարարությունը:<br>բ/ քաղաքական ապաստան տալու հետ կապված հարցը օրենքով սահմանված կարգով լուծում է հանրապետության նախագահը<br>գ/ Հանրապետության նախագահը ամենօրյա կապի մեջ է երկրում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների հետ, ընդունում է պաշտոնական պատվիրակություններ և բանակցություններ է վարում նրանց հետ:<br>դ/ Հանրապետության նախագահն է ընդունում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը: |
| 68. | Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ. | ա/ Ֆրանսիացի Ժան Բոդենն իր «Պատմության աշխարհագրական առանցքը» գրքում բացատրում է բնակչության, պետության, նրա քաղաքականության և բնական միջավայրի միջև կապը<br>բ/ «Օրենքներ ոգու մասին» աշխատությունը և «Աստրախանի հայերի դատաստանագիրքը» թվագրվում են նույն թվականին՝ 1748:<br>գ/ Ալֆրեդ Մեխենը առավելություն է տալիս պետության ծովային դիրքին:<br>դ/ Մեծ տարածքների գաղափարի հեղինակը Հելֆորդ Մաքինդերն է: |
| 69. | Քաղաքացու իրավունակությունը. | ա/ բոլոր քաղաքացիների համար տարբեր է<br>բ/ բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես<br>գ/ ծագում է քաղաքացու չափահաս դառնալու հետ մեկտեղ<br>դ/ կարող է սահմանափակվել շահագրգիռ անձի դիմումի հիման վրա |

| | | |
|---|---|---|
| 70. | Ստորև թվարկվածներից ո՞րը ճիշտ չէ.<br>Ամուսիններից մեկի դիմումի հիման վրա ամուսնալուծությունը կարող է կատարվել Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում, եթե մյուս ամուսինը՝ | ա/ դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող<br>բ/ դատարանի կողմից ճանաչվել է սնանկ<br>գ/ դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ<br>դ/ դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով |

**Չորս բաղադրիչով հարց-առաջադրանքներ**

***Գտնել ճիշտ կապերն ու համապատասխանությունները աջ և ձախ սյուներում տրված հասկացությունների, երևույթների միջև:***

***Պատասխանները գրանցել առաջադրանքից հետո զետեղված աղյուսակում՝ համապատասխան թվի տակ նշելով ճիշտ պատասխանի տառը:***

*Պատասխանի ներկայացման այլ տարբերակները չեն գնահատվելու:*

*Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասխանը՝ չորս միավոր:*

**71. Համապատասխանեցնել գաղափարական հոսանքները դրանց բնութագրերին.**

| | |
|---|---|
| 1.Ռասիզմ | ա/ Արտադրահարաբերությունների ողջ համակարգը պայմանավորված է այն հանգամանքով, թե ում սեփականությունն են կազմում արտադրության հիմնական միջոցները: |
| 2.Պահպանողականություն | բ/ Առաջին պլանում բնակչության , առանձին խմբերի մարդաբանական հատկանիշներն են և դրանցից բխող քաղաքական, սոցիալական , տնտեսական և այլ շահերը: |
| 3.Մարքսիզմ | գ/ Այս ուղղության ներկայացուցիչները հաճախ հանդես են գալիս դանդաղ, աստիճանական, «վերևից» կատարվող փոփոխությունների օգտին: |
| 4.Ազատականություն | դ/ «Պետության մեջ պետք է տիրապետեն ոչ թե առանձին անձինք, այլ օրենքները»: |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | |

**72. Համապատասխանեցնել հասկացությունները՝ դրանք բնութագրող հատկանիշներին**

| | |
|---|---|
| 1.Պետություն | ա/ Անկախություն և իրավահավասարություն այլ պետությունների հետ հարաբերություններում: |
| 2. Պետական իշխանություն | բ/ Գերակայությամբ օժտված քաղաքական հատուկ կազմակերպություն: |
| 3.Ներքին ինքնիշխանություն | գ/ Իրականացվում է իրազեկման, համոզման և իրավական հարկադրանքի եղանակներով: |
| 4.Արտաքին ինքնիշխանություն | դ/ Պետության մենաշնորհային իրավունք՝ երկրում իրականացնել օրենսդիր, գործադիր և իրավապահպան գործառույթները: |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | |

**73. Համապատասխանեցնել տեսությունները դրանք բնութագրող գաղափարներին.**

| | |
|---|---|
| 1. Ռեպրեսալիա | ա/ ջրի որակի և մաքրության վերականգնում, որ կեղտոտվել էր տվյալ պետության մեղքով |
| 2. Ռետորսիա | բ/ իրավախախտ պետությունից ապրանքների ներկրման արգելք՝ (էմբարգո) |
| 3. Ռեստորացիա | գ/ պաշտոնական ներողություն խնդրելը |
| 4. Սատիսֆակցիա | դ/ մաքսային տուրքերի բարձրացումն տվյալ պետության ապրանքների համար |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | |

**74. Համապատասխանեցնել մարդու՝ բարի կամ չար լինելու վերաբերյալ պատկերացումները հեղինակ-փիլիսոփաներին.**

| | |
|---|---|
| 1.Ժան–Ժակ Ռուսո | ա/ «Որքան մարդը բարի է, այնքան ավելի շատ է ուրիշների մեջ բարություն տեսնում»: |
| 2.Բլեզ Պասկալ | բ/ «Մարդը չար էակ է» |
| 3.Ֆրիդրիխ Նիցշե | գ/ «Մարդը հակված է չարիք գործելու: Բայց մարդու մեջ կան նաև բարու հատիկներ» |
| 4. Իմանուիլ Կանտ | դ/ «Մարդն ի բնե բարի է: Նրան չար է դարձնում հասարակությունը»: |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | |

Փորձարկման բնույթով

**75. Համապատասխանեցնել մարդու իրավունքների վերաբերյալ դատողությունները տրված բնութագրերին.**

| | |
|---|---|
| 1. Անկապտելի են: | ա/ «մարդը ձեռք է բերում իրավունքներ ծննդյան պահից և չի կարող կորցնել դրանք» |
| 2. Համընդհանուր են: | բ/ «մարդու բոլոր իրավունքները միասին կազմում են մեկ միասնական համակարգ» |
| 3. Անբաժանելի են: | գ/ «ոչ ոք չի կարող զրկել մարդուն որևէ իրավունքից» |
| 4. Փոխկապակցված են: | դ/ «աշխարհում մարդու իրավունքները նույնն են բոլորի համար» |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | |

Փորձնական բնագիր